

ՏԱՍՆՄԵԿԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄԵՆԿ

Տարեկան դեր 10 բուր, կէս տարվանը 6 բուր:
Առանձին համարները 5 կոպէկով:
Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ:
Օտարաբարդաբայից դիմում են ուղղակի
Тифлис. Редакция «Менк»

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի և տօն օրերից):
Ցայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով:
Ցայտարարութիւնների համար վճարում են
Խրաքանչիւր բառին 2 կոպէկ:

ԲՈՎԱՆՊԱԿՈՒԹԻՒՆ

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ: Նամակ խմբագրին:
Նամակ խմբագրին: Ներքին լուրեր: ԱՐՏԱՔԻՆ
ՏԵՍՈՒԹԻՒՆ: Արտաքին լուրեր: ՀՆՈՒԱԳԻՆՆԵՐ:
— ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ: — ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ:
Նամակ թիֆլիսացի:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ

Թիֆլիս, 31 օգոստոսի

Ուսուցչական ժողովը առիթով «Մշակում»
սոված յորտեմը ցոյց է տալիս, թէ ուսուցչա-
կան յանձնաժողովը ծխական դպրոցների նպա-
տակը «ընդհանուր դարգացումն և բարոյական
կրթութիւն» դնելով, որքան անորոշ մի սահման
է դնել այդ տարրական ուսումնականների համար:
Երկուստեք դպրոցները ոչ Գերմանիայում, ոչ Շվեյ-
ցարիայում, ոչ Անգլիայում և աշխարհի ոչ մի
երկրում իրանց համար դեռ մի այդպիսի անհա-
սանելի նպատակ չեն դրած, որ ուղենային ծխա-
կան կամ ժողովրդական ստորին և բարձր դպ-
րոցների աշակերտներին ընդհանուր դարգացումն
տալ: Այդ ընդհանուր դարգացումը բոլոր քաղա-
քային երկրներում ինչպէս Եւրոպայում, նոյն-
պէս և Ամերիկայում տալիս են միջնակարգ կոչված
դպրոցները ինչպէս գիմնազիւնները, բնական
ուսումնարանները և այլն: Իսկ ծխական դպրոց-
ները տալիս են ընդհանուր դարգացման ամեն ան-
հասանելի:

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՆԱՄԱԿ ԹԻՖԼԻՍԻՑԻՑ

Կ. Պոլիս, 1 օգոստոսի

Տրապիզոնում մի բարեկամող դէպք հանդիպեց
ինձ Կ. Պոլիս գնալու: Փառն տարի առաջ, պա-
տանկութեան հասակում, առաջին անգամ մը-
տեղ եմ այդ քաղաք ուսանելու համար: Բայց բա-
րեկարգ ուսումնարանների չը գոյութիւնից, սո-
վից չը մտնելու համար, սովորված հայրենի լե-
զուի ուսուցչութեան պաշտօնն եմ կատարել:
Սկսած խրման հայրիկից, յիշում եմ երեսունից
աւելի վանեցիք, որոնք նոյն նպատակով Պոլիս
են գնացել, սակայն ուսանելու փոխարէն, ուսու-
ցիչ են: Վանի պէս բոլոր գաւառական քաղաք-
ները տուել են միշտ Պոլսին իւրեանց բարոյական
օժանդակութիւններ: Ինչպէս Բիւրանդիւնի
200,000-ից աւելի հայ ազգաբնակչութիւնը կազ-
մուել է գաւառների յօւրտեան պակասած միլիո-
նից, որով միշտ լեցվել է Ստամբուլի մեղկու-
թեամբ և հեշտաբնակութեամբ տարածած մաշված
պղտավանների թիւը, և այս օրուան կոտորելու
չամբ բարակ, կարճահասակ, վտիտ մարմնով, ա-
նօտրացած ուղեղով պոչեցի հայերին տեսնողը,
չէ կարող երեսկայել, որ այդ անգոյն մարդիկ
Հայաստանից դաղթած առողջակազմ և յաղթան-
դամ մշակների (համալ) սերունդն են: Սրա հե-
տեկով տաճկական մօզային, նոցա կայսրու-
թեան պէս օրէջօր բարակում են: Այդ քառորդ
միլիոն հայ բնակիչ ունեցող քաղաքի փողոցնե-
րից անցնող օտարական հային խիտ դժար է
զգալիս, որ ոչ մի կողմ հայերէն բարբառ չէ լը-
սում: Բոլոր ազգեր խօսում են իւրեանց մայրենի
լեզուով. մարդու նախանձն անգամ չարժեքում է
բուրբաբական լեզուն լսելիս: Յօյները իւրեանց
բարբառով օդն են զրգային. իսկ ըս ազգային
անձնասիրութենից զրկված արիւնակիցը, սիրելի
ընթերցող, դու չես գտնում ոչ մի տեղ: Նա ին-

ան հրաժեշտ տարելը, դրանով բաւակա-
նանում են և պէտք է էլ բաւականանա:

Բայց մեր ուսուցչական յանձնաժողովը ծխա-
կան դպրոցների ծրագիրը չինելիս ոչ թէ միայն
նրանց նպատակն է չափից դուրս մեծացրել, այլ
ծխական դպրոցների բուն ուղիղ նպատակին, այ-
սինքն ընդհանուր դարգացման ամենանահաժեշտ
տարրերը աւանդելու կէտին հանելու ժամա-
նակն էլ չորս տարի նշանակելով կրտիկա չը
վերցնող մի հակամակալարժեքական սխալ է գոր-
ծել: Հանրաժանութիւնը ամեն և ուսուցչական յանձ-
նաժողովը պէտք էր իմանար այդ հանրաժանութի-
ւանք—որ Գերմանիայում աշակերտները ծխական
դպրոցներում մնում են համարեա թէ ութ տարի,
այսինքն վեց տարեկանից եղած մինչև տասնու-
չորս տարեկան հասակը, թէ և Անգլիայում և Շվեյ-
ցարիայում երբեմն դրանից էլ կարճ: Ինչպէս հա-
րաւոր է համարել մեր ուսուցչական յանձնաժողովը
չորս տարեկա ընթացքում այն նպատակին հաս-
նել, որին եւրոպայից հաղիւ ութ տարեկա ընթաց-
քում են հասնում: Դնչպէս հարաւոր է համարել,
մանաւանդ երբ բաղդատեցը մեր հասարակութիւնը
Եւրոպայի հասարակութեան հետ, մեր միջոցները,
մեր դասագրքերը, մեր ուսումնարանի չինութիւննե-
րը, մեր ուսուցչիները և մեր ուրիշ չափ թերի բաները
Եւրոպայի կատարեալ միջոցների և ուսուցչիների
հետ: Եւ մեր ուսուցչական յանձնաժողովի այդ
մեծ սխալը առաւել եւս է մեծանում, երբ դրա
նշանակած չորս տարին եւրոպացի ութ տարեկա
հետ բաղդատեցը: Ընդհանուր ուսուցչական ժո-
ղովում այդ քառամեայ դասընթացի վրա խօսե-
լիս յայտնվեցաւ, որ մեր գիւղերում աշակերտնե-

քն է որ արձամարտել, գործածութիւնից դուրս է
ցցել իւր հայրենիքից բերած նախահարց լեզուն:
Ամեն մի աղջիկ ինչքան ճանաչվում է իւրաքանչիւրը
իւր սեփական տարազն՝ սովորութիւններն ունի:
Յօյները մի վերստ հեռաւորութիւնից ջոկվում են:
Ինչ անբաղդութիւն է, որ ըս հայը ջոկվում ո-
րոշվում չէ,—որ է նրա տեղը, ուր կարելի է
գտնել: Թիֆլիսի մէջ: Նա խառնված է նրանց
տարազով, բաղբով, սովորութիւններով և լեզուով:
Ստամբուլի հայերի համար, չափ իրաւացի է ա-
սել մի ֆրանսիացի ճանապարհորդը, «թէ հայեր
ոչ այլ ինչ են, քան քրիստոնէայ թիւրքեր»: Ա-
ռանձին յարգանաց արժանի է պոչեցի հայ կինը,
որ խօսում է միշտ մայրենի լեզուով. նա է որ
ազատել է այդ մարդուն լեզուով կատարելապէս
թիւրքաւարաց:

Բայց ես մտաւայ երկու խօսք ասել Ստա-
մբուլի ներգործած ապաւորութեան վրա:
Վօսֆօրի աշխարհադրական կազմուածքը ներ-
կայացնում է մի անհամեմատ գեղեցկութիւն:
Այդ գեղեցկութիւնը վայելելու համար հոր-
կաւոր է ցամաքի վրա ոտք չը դնել, այլ մի
քանի անգամ նեղուցի մի ծայրից միւսը նստել
անց ու դարձ անուշ և հեռանալ: Ով որ ոտք
դնում է ցամաքի վրա, մեղական պատկերի նման
վայր է ընկնում: Նրա աչքերից գեղեցկութեան
վարագույրը և գտնվում է տղեղութեանց, ապա-
կանութեանց, նաև եւրոպական շողողուն մազա-
ղիների, վաճառականական ամենահարուստ մթե-
րանոցների, չքեղ և աղքատ բնակարանների, նեղ,
ծուռ և աղբով լի փողոցների, այլապէս քա-
տած շէնքի, մարդիկների բազմաթիւ և բազ-
մատարաղ բաժանմունքի մէջ: Այս ամենը
կազմում են խառնաշփոթութեանց մի լայնա-
տարած խառն, որին Ստամբուլ են անուա-
նում:

Թիւրքերը սիրող են գեղեցկութեան. նրանք
աշխարհի ամեն ծայրերից ոսկու դնով, գեղեցիկ
կանանց մի անգին բաղմունքի ժողովելով, նե-
ղուցի գեղեցիկ ախիւր վրա մեծածախս ապարա-
նիւր շինելով, աշխատել են մարմնացնել երեսկա-
յական խոստացեալ ջինեթը (զրախտ), բայց այդ
գեղեցկութիւնը թիւրքերը չը գտնեն մշակել և
զարգացնել. այլ գտնեն վայելել և ապականել,

որ 5, 6, 7 և նոյն իսկ 8 ամիս մի ամբողջ տա-
րում դպրոց չեն դնում և ուսումից յետ մնալով
իրանց երկրագործ ծնողներին են օգնում: Իսկ
բոլոր Եւրոպայում, Գերմանիան իբրեւ օրինակ
առնելով, ամառուայ՝ արձակուրդը երկու ամիսից
չէ անցնում, ոչ թէ միայն քաղաքային, այլ նոյն
իսկ գիւղական դպրոցների համար: Ուրեմն Եւրո-
պայում տարրական դարգացում ստանալու հա-
մար մի աշակերտ յաճախում է դպրոցը 80 ամիս,
իսկ մեր ուսուցչական յանձնաժողովի մտքով հայ
մանուկը կարող է ընդհանուր դարգացումն ստա-
նալ 28 ամիսում, 24, 20 և մինչև անգամ 16 ամ-
սում: Եթէ Լէյպցիգի, Գոթայի և միւս գերմանա-
կան մանկավարժները իմանան որ մենք, հայերս,
թերի միջոցներով և անաղող հանգամանքների
մէջ կարողանում ենք մի այլքան կարճ ժամա-
նակում մեր մանուկներին «ընդհանուր դարգա-
ցում» տալ, խուսերով կը դան մեղ մօտ մեղա-
նից այդ դաղտնիքը սովորելու: Սակայն կատակը
մէկ կողմ դնելով, մեր մանուկէտ մանկավարժ-
ները պէտք է իմանային որ 10, 11, 12 տարեկան
«ընդհանուր դարգացումն և բարոյական կրթու-
թիւն» ստացած տղան contradictio in adjecto
է: Ընդհանուր դարգացում և բարոյական կրթու-
թիւն ստացած այն անձին կարելի է ասել, որ
ինքնաճանաչութիւն ունի, որ հասկանում է իր
ընտանիքը, իր ազգը, ընդհանուր մարդկութիւնը,
որ ընդունել է իր պարտականութիւնները դէպի
իր անձը, ընտանիքը, համայնքը, եկեղեցին, պե-
տութիւնը, որ ճանաչում է ամուսնութեան էա-
կան հանգամանքները և ուրիշ այդպիսի ծանր
բաներ, որ միայն չափահասներին կամ չափահա-

որոնց բնաւորութեան արտադրութիւնը Ստամբու-
լում է:

Չը գիտեմ ճշմարիտ, որ Պոլսի օդը իւր աշ-
ման մեղկացնող ազդեցութիւնը առաջ էլ ունե-
ցել է: Յայտնի է, որ նրան ճակատադրված է
կայսրութիւնների գերեզմանոց դառնալ, որ թե-
րեւս և մի ժամանակն են բոլոր ազգաց կոնցէր-
տով վերջանայ: Այդ մեղկացնող օդը ազդեցութեան
արդիւնքը ամենից աւելի տեսնվում է թիւրքերի
և շինիւր վրա: Ուկլեյիլիւրի և նեղուցի բո-
լոր ախանց սրճարաններում խառնված նստում են
միշտ անգործ թիւրքերի խումբեր, որոնք բլբը-
լացնելով ներդիւն, ծուլը քառնում տալով, սուրճ
խմելով, լուռ, անշարժ, ակնապիւր, անյոզ նա-
յում ու նայում են ծովախնայ անց ու դարձ անող
նաւակների վրա, մինչև որ մթութիւնը վերջ է
դնում նոցա պղնդ թմբութեան, հրաւիրելով դե-
պի հարսնի գեղեցկութիւն:

Ամենից աւելի աչքի ընկնող և ամենամեծ տա-
րածութիւն բունող չէքեր բազմաթիւ ջամիներն
են իւրեանց բարձրագագաթ սրածայր միւսարէնե-
րով: Ամեն մի թիւրքաց սուլթան պարոն
համարում են ծովախնայ անց ու դարձ անող
նաւակների վրա, մինչև որ մթութիւնը վերջ է
դնում նոցա պղնդ թմբութեան, հրաւիրելով դե-
պի հարսնի գեղեցկութիւն:

Փողոցների ուղեգրութիւնն են դրաւում շներ,
որոնց թիւը բնակիչներ թիւից պակաս չէ: Դրա
աւելի նման են շակալների, գայլերի, աղուների:
Այդ կենդանիները վայելում են համաքաղաքացի-
ութեան իրաւունք և Պոլսի ամենաբազմաթիւ
արարածներն են: Փողոցի բարայտաւիները նոցա
սեպականութիւնը են, ուր ազատ ծնվում, ապ-
րում, մեռնում են, անպատիժ աղտոլեղելով նորան:
Փողոցի միջին ամբողջ օր ծուլութեամբ պառկած
ընում են, որոնց չը կոխ տալու համար, անցորդ-
ները պարտաւորված են անդադար ալ և ձախ
թեքվել: Այստեղ շները կենդանեաց հովանաւո-
րող ընկերութեան պէտք չունեն. ամեն մի ճըլ-

սութեան մօտեցածներին է մատչելի: Իսկ «ընդ-
հանուր դարգացած երեսկայ» ինքն ըստ ինքեան
հակասութիւն է:

Միայն մէկ պատճառով կարելի է կիսով չափ
բացատրել յանձնաժողովի այդ սխալը. մեր ման-
կավարժները այդ ծրագիրը պատրաստելիս գուցէ
ի նկատի ունեցել են այն իրողութիւնը, որ գիւ-
ղացիները ութ տարի շարունակ և այն էլ տա-
րեկան տասն ամիս իրանց գաւակները դպրոց
չեն ուղարկի: Թէ և այդ կարծիքը դեռ վիճելի է,
բայց դիցուք թէ ուղիղ էլ լինել, միթէ դրանից
կը հետեւի սխալ դիզել մէջ դնել ծխական դպ-
րոցների նպատակը: Դա նրա նման է, որ մէկը
ունենայ միայն մի արշին մատուղ, և դերձակը
նրան խոստանայ այն մի արշինից նորա համար
վերարկու չինել: Պարզ ասեցէք, որ 4 տարում
չէ կարելի «ընդհանուր դարգացումն» տալ: Եթէ
հայ մանուկին կարող և դրել սովորեցնէք, նոյն-
պէս և սրբադան պատմութիւն և թուաբանու-
թեան չորս գործողութիւնները, և բարոյական
կրթութիւնից» էլ եթէ սովորեցնէք, սուտ չասել,
չը գործանալ, կոխ թիչ անել և մի թիչ էլ քաղա-
քավարի լինել, այն ժամանակ ամբողջ ազգը ձեզ
չնորձախաղութիւն կը յայտնէ:

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ

Թիֆլիս, 30-ին օգոստոսի

Մէկ դրուածքին առանց հասկանալու պատաս-
խանել, անպատեղ նորա հեղինակին, անհիմն ա-
նուանել այն գրվածքը, չափերի մասնագիտութիւն

մարիտ միւսուլմանը պատրաստ է պաշտպանել
նրանց բոլոր գրկանքների դէմ: Արդարեւ չնեղը,
թիւրքերի չնորձիւ կատարեալ ազատութիւն և
հովանաւորութիւն են վայելում և աւելի խնամվում
են, քան թիւրքաւարութիւն մի գետնուր:

Ահա մի հասարակութիւն որ թիւրքաստանում
բոլոր հարստահարութեանց դէմ պաշտպանված և
երջանիկ է:
Թիւրքերի վօսֆօրի տիրապետութիւնից զինի,
այստեղ հաստատվեց հաճկա-շայատանի պատ-
րիարքութիւն, ուր պատրիարքեր և պատրիարքա-
ցուներ պարապել են միշտ և պարապում են
պատրիարքական աթոռի խնդիրներով. օրհնակ
կիրակոս պատրիարքի ոտների տակ փորել, կոր-
ծանել է Ներսէսը և ինքն է նստել նորա տեղը,
Մարկոսն էլ Ներսէսին է կործանում, որ ինքը
աղդի կառավարութեան դուռն անցնի, այնպիսի
անձինք, որոնք մի կին, մի ընտանիք կառավա-
րելու կարողութիւն, ընդունակութիւն չունենա-
լով, դիմել են կուսակրօնութեան, ձրի հայթայթ-
ված հացին: Շատ քիչ բացառութեամբ այսպէս
են յաջողել միմեանց Կ. Պոլսի պատրիարքներ
հասգին աղմուկներով և կռիւներով:—Ինչ բան
ունեն Ստամբուլում այդպիսի կախկալուներ և
30-նից աւելի վարդապետներ: Ինչ էր անում
Ներսէս կախկալուսը՝ քանի որ պատրիարք չէր և
այժմ քանի որ հրաժարվել է: Ոչ ոք չէ ցանկա-
նում գաւառներ դնալ. այստեղ խիստ է կեանքը՝
կերակուրները համեղ չեն, սիրեկաններ չէ կարելի
պահել, պատրիարք չէ կարելի դառնալ, բնակիչ-
ները խորհրդ են, մօռնալապի, ֆասուկա չը
կալ: Ահա ինչ է մտածում հայ պորտաբոյժ հոգե-
րականը, որոնք բոլորը միասին մի եղութի մօտը
չարժեն: Փանի օր առաջ, ինչպէս գրել էի Տրա-
պիզոնից, թերեւս խեղճապաշտեան, հայոց աղ-
գի վրա ծիծաղելու համար, ժողովվում են, խոր-
հուրդ են անում Հայաստան գնալ եզրեկաների
դէմ մաքառելու. խմբագրում են, կարծեմ, 99 կա-
նոններ, կոխ է ծագում նախագահի ընտրութեան
վրա, Հոգին Սրբոյ տեղ, ստանան իշնում է
վերնատուն մահալլապի ուսող առաքելների
մէջ և ամենքը լցվում են նորա չնորձով ու սուտ
ու փուտ ամեն մէկը տիտիկ է անում իւր տեղ:
Այսպէս անա վերջացաւ հայ կղերի այն հռչակա-

է դարձել: Չեր ազդողուտ լրագրի 158 համարում տպւած էր մէկ նամակ Կ. Տէր-Կալիթան ստորագրութեամբ: Պարոնը սատիկ վիրաւորել է նորանից, որ ևս «թողնելով թիֆլիսի օրիորդաց ուսումնարանները տուած օգուտը, շատ մութ կերպով եմ նկարագրում նոցա»: Եթէ մենք մեր ազգիկներին ուղարկում ենք ուսումնարաններ, այդ միայն այն նպատակով է, որ բացի ինչպէս ասում են բան սովորելուց, նա, այսինքն ազգիկը, թողնի այն բոլոր անոտիապաշտութիւնները և նախապաշարմունքները, որոնք մուտք են դործել դարերի ընթացքում մեր դասիկ ժողովրդի մէջ: Մեզ ինչ օգուտ, երբ մեր լուսաւորեալ օրիորդը, անուամ է այն, ինչ որ մենք կարող ենք սպասել մի գեղջիկուհուց, որ իր կեանքում ոչ ուսումնարանի երես է տեսել և ոչ վարժապետի: Ուսում ստացած օրիորդը ինչով պէտք է դանազանով վերջինից, եթէ ոչ միայն նորանով, որ նա պէտք է հեռացած, մաքրուած լինի: այդ մտար խաբէութիւններէ: Ուսումնարանը ինչ տեսակ էլ որ լինի նա, աղբաւ թէ հարուստ, նա կարող է իր դրութեան համաձայն օգուտ տալ թէ աշակերտին և թէ աշակերտուհուն: Բայց երբ տեսնուում են թերութիւններ, այդ ժամանակ այդ թերութիւնները կամ դրութեան այս կամ այն լրագրում, կամ բերանացի ասվում են, որպէս զի առաջին առնվին: Պարոն Կ. Տէր-Կալիթան ասում է. «ես անձամբ ճանաչում եմ պ. Ջալիտեանին և զիտեմ նրա չերմեանդ գործունէութիւնը ազգային ուսումնարանաց մէջ 1857 թականից մինչև ցայսօր»: Այս ասելով պարոնը ուղում է ցոյց տալ, որ պ. Ջալիտեանը իր պաշտօնը լաւ է կատարում: Տայ Աստուած, աւելացնում եմ ես, բայց ուր տանենք այն բազմաթիւ նամակները, որ գրվեցան պ. Ջալիտեանի դէմ. կը նշանակի նոքա լոկ զրպարտութիւն էին: Ես չեմ հասկանում, այդ գործերը (չեմ յիշում բերանացի զանգարողներին) ինչ հաշիւ ունեն պ. տեսչի հետ, որ չեն կարող վերջ դնել դանդաղներին. այս բանին պատասխանելով մնում է նոյն իսկ տեսչին, այսինքն պ. Ջալիտեանին: Կուր, պ. Տէր-Կալիթան, բաւականաչափ միայն նորանով որ աչքի առաջ էք ունեցել մօտ օրերումս հրատարակված ուսումնարանի համառօտ հաշիւը, հողաբարձուների ստոր-

ւոր առաքելական արշաւանքը, որի համբաւը, ով գիտէ, որչափ սարսափեցրած կը լինէր եզուխաներին:

Ընթերցողը թերևս կը յիշեն, քանի տարի առաջ, պատրիարք Ներսէսի առաջարկութեամբ և նախադաճութեամբ կազմակերպ էր խորաշնչեան դաշնակցութեան պէս մի ընկերութիւն, հայկական միութիւն անուանով: Թէ որքան հաստատամիտ էր այդ մտքի առաջարկողը, նորանից է յայտնի, որ անունն եղաւ գործը չեղաւ... Այստեղ ամեն բան այդպէս է, անունը կայ, ինքը չը կայ, Կ. Պոլիս կայ, մէջը հայ չը կայ: Անհամար ընկերութեան անուններ կան, բայց մի ընկերութիւն չը կայ: Նորերումս դարձեալ պատրիարք Ներսէսի նախադաճութեամբ կազմվում է անտեսական միութիւն անուանով ընկերութիւն, խմբագրում են կանոնադրութիւն, ընտրվում են ատենապետն ու ատենադպիրը և ամեն բան վերջանում է և Հայաստանը անտեսապէս բարեօրւում է... Զարմանալի բան, միթէ այդ մարդիկ ոչինչ զգացմունք չունեն, խիղճ չունեն. ինչո՞ւ են խաբում իրանք իրանց. ինչո՞ւ են խաբում այլոց: Ինչ է նշանակում յայտնի հրաժարվել և ծածուկ խռովութիւններ յարուցանել: Ի՞նչ դարմանալի խղճմունք է, ազգից և նորա կենսական շահերից սանդղատ չինել, միմիայն Լուսաւորչայ ավտոխն հասնելու համար: Ստեպ ստեպ տարածվում է Կ. Պոլսում կաթողիկոսի մահուան բուրբ, և ասելի ստեպ տարօրում է մեր կաթողիկոսացուների սիրտը: Վեհափառը դեռ շատ օրեր է ապրելու: Ուրեմն դեռ շատ կունենանք հայկական միութեան, անտեսական միութեան պէս ընկերութիւններ...

Գնացել պատրիարքարան. Կ. Պոլսոյ ծովափնի միտնողներին, ամուսնացողներին վրա տեղեկութիւններ ստանալու, թէ որքան է նրանց թիւը: Կը հաւատան, ընթերցող, որ այդ թիւը այնտեղ չը կային... Գտնէ այդպէս յայտնեց տեղապահ վարդապետը և ես այժմ չեմ կարող ասել, թէ տարին որքան է սակաւում մի անբարոյական ժողովրդի թիւից, որովհետեւ ոչ ոք չէ ամուսնանում և մեծ մասը անկանոնութեան մէջ է մաշվում, անժառանգ: Գալով պատրիարքարանի շինութեան, ինչ շինութիւն: Երեւակայեցէք մի մեղգրի Կիրա-

րազրութեամբ: Այդ քիչ է մի նամակին պատասխանելու, որովհետեւ ստորագրողների թիւը հասնում է մինչև 4-ի, իսկ զանգարողների թիւը մեծ է, որովհետեւ անբաւական են պաշտպանած տեսչից նոյն ուսումնարանի վարժապետները և օրիորդները մի քանի հասկացողները (ես ինքս ստուգել եմ այդ) և բազմաթիւ մասնաւոր անձինք: Այստեղ դուք ակամայ պարտաւորվում էք յիշելու հետեւեալ ասածը. «Ձայն բազմաց, ձայն Աստուծոյ»: Ի միջի այլոց դուք ասում էք, որ այսպիսի չարախօսութիւնները փորձով գիտենք, որ միշտ վնասում են գործին և կարողանում են շատերին մոլորեցնել և ազգային հաստատութեանց զիրքը թուլացնել: Մենք բոլորովին դիտաւորութիւն չունենք չարախօսելու և վնասելու այն ազգային հիմնարկութիւնները, որոնք տանում են դէպի զիտութեան և լուսաւորութեան ճանապարհը: Ընդհակառակն մենք այդպիսի հիմնարկութիւններին սրբազան պարտք ենք համարում կարողութեան չափ օգնել: Բայց մի և նոյն ժամանակ, չենք կարող լսել և չը յայտնել այն վնասները և թերութիւնները որոնք պատահում են մեր ուսումնարանում: Իսկ նոցա, որոնք ճշմարտութիւնը մի կողմը թողած, ուրիշների գրուածները, իրանց կարծիքով չարախօսութեան կարգին կատարած անձնական կրքերից զրոյթած, ինչպէս իրանք ուրիշների համար են ասում, մենք անուանում ենք խաւարասերներ և կոչ պաշտպաններ:

Յ. Մ.

ՆԵՐՍԵՍԻ ԼՈՒՐԵՐ

Մօտ երեք ամիս շարունակվող չորային եղանակից յետոյ, վերջապէս անձրևներ սկսեցին գալ թիֆլիսում և եղանակը յանկարծ հովացաւ:

Օգոստոսի 31-ին Ուսուցչական ժողովի առաւօտեան նիստում օրիորդ Գալիանէ Յովհաննիսեան ծաղկոցի երկեսու աշակերտներին մի օրինակելի դաս տուեց, ժողովի ներկայութեամբ: Դասը շատ աջող կերպով անցաւ և ժողովականներից շատերը, նոյն իսկ նրանք, որոնք Եւրօպայումս են եղել, խոստովանվում էին, որ օրիորդի օրինակելի դասը նրանց համար մի բոլորովին նոր բան էր:

Կուսի տուն, ուր հայոց մեծ ազգի գլուխը ընդունել է տէրութեանց դեսպանների այցելութիւնը և պոսեցի հայը չէ ամաչում այն տեղ մտնելու:

Երկու անգամ գնացի երեսփոխանական ժողովի նստարան. առաջին անգամ սիրտս բարախում էր, որովհետեւ ներկայաւանդու էի ազգի պատգամաւորների ժողովին, որը ղեկավարում է բոլոր կազմակերպութեանց և վճռում է ազգի բազմը. երկու անգամ էլ խնդրեմ պատրիարքի հրաժարականի վրա էր. ճշմարիտ խօսելով ես ոչինչ չը հասկայայ, թէ և հայերէն էին խօսում, ես չը կարողացայ հասկանալ թէ ոչք էին պատրիարքեաններ և հակապատրիարքեաններ, թերեւս պատուելի միտքը բացառակ յայտնելու: Երկրորդ ժողովին ամբողջով մի քանի անձինք գրուացին, թող հրաժարվեն երեսփոխանների խնդրէ մեր պատարժան պատգամաւորները կծկի զրին քաջասրտութեամբ և նիստը խանգարվեց:

— Ի՞նչ տպաւորութիւն գործեց ձեզ վրա, հարցնում էին պոսեցի ծանօթներու:— Խիստ վատ, պատասխանեցի:

— Այն, այսօրվայ նիստը աղէկ չէր, կրկնում էին նոքա միութարական եղանակով: Բայց որ օրվայ նիստ աղէկ է եղել...:

Ինձ թւում էր թէ մի խումբ աղուէսներ նստած, չըբխէ—թըբխէ սառուց են կրծում, կամ ջուր են ձեռնում:

Բաւական է երեցիփոխան էֆէնդիներին առանց փաստերի զրպարտել, մի քիչ էլ նրանց գործերը մէջ տեղ կը բերեմ: Դուրս համար 1881 թականի երեսփոխանական ժողովի տպաղրված տեղեկագրից բառ առ բառ օրինակում եմ «Մշակ» ընթերցողների համար 19 աւարտեալ խնդիրների ցուցակ, որը ժողովի ամբողջ մի տարվայ գործունէութեան արդիւնք է:

«Հայուն ժողովոյ Խ. Ս. նախագահէն: Վաւերացումն երեսփոխանական ընտրութեանց (տրա վրա եօթն նիստ է եղած):

Ծանուցադիր ս. պատրիարք հօր ի վերայ հրաժարման իւրոյ: Տեղեկագիր ատենապետաց դիւանի: Երեսփոխանական հրաժարական և մահ: (Սորա-

ծաղովը օգնութեամբ ծախահարութիւններով վարձատրեց յարգելի օրիորդի դասախօսութիւնը:

Օգոստոսի 28-ին, առաւօտեան, կայացաւ Արծրունու թատրոնում հայոց բարեգործական ընկերութեան ընդհանուր ժողովը «Ապաստարանի» հարցը լուծելու համար: Բժիշկ Շահպարտեանցի բացակայութեամբ ընտրվեցաւ ընդհանուր ժողովի նախագահ Արգար Յովհաննիսեան: Վճուկեցաւ որ ծրագրի այն յօդուածը որտեղ ասված էր թէ «ապաստարանի մէջ ընդունվում են թիֆլիսի և Կովկասի այլ տեղերի հայ երիտասարդներ» օրէնք է փոփոխվի այսպէս. «ապաստարանի մէջ ընդունվում են թիֆլիսում ուսում առնող հայ չըբաւոր աշակերտներ»: Վճուկեցաւ որ իւրաքանչիւր աշակերտ, որ ապաստան է ընդունվում, պէտք է վճարի ամսական 5 բուրբ: Փոփոխվեցան և տեղափոխվեցան ծրագրի մի քանի յօդուածներ: Ապաստարանի տարեկան բնութեւտը լինելով մօտ 2,000 բուրբ, երկար վիճաբանութիւններից յետոյ վերակացուին արվելի ռոճիկի մասին, վրձուվեցաւ թոյլ տալ ընկերութեան խորհրդին աւելացնել բնութեւտից դուրս մի յայտնի գումար, եթէ նիւթական միջոցները ներեն, վերակացուին ռոճիկը աւելացնելու համար:

«Русский Курьер» լրագրում կարգում ենք հետեւեալ: Մեզ հաղորդում են, որ ենթադրութիւն կայ արհեստական կերպով ոռոգելու կովկասեան նախկին փոխարքայութեան ամենից աւելի պողատու նահանգի, այն է—Բագուի դաշտերը: Այդ նահանգում, ինչպէս յայտնի է, վերջին բոլոր ժամանակներում բնակվում էին մարկանները, որոնք աշխատասեր և համբերող են, բայց չի պակասութիւնը ստիպում էր նրանց կարսի նահանգը զաղթել: Վերոյիշեալ փաստը դարձաւ պատճառ, որ կառավարութիւնը կամենում է օգտակար դարձնել Կովկասի այդ ամենապտղաբեր հողը:

Նոյն լրագրին հաղորդում են, որ ամենակարճ ժամանակում յոյս կայ որ կը վերջանայ հողերի սահմանադրելը (межевание) Կովկասեան փոխարքայութեան հետեւալ նահանգներում. Բագուի,

Երեւանեան և Կուբանեան ու Տերակայա չրջաններում:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

— Կ. Պոլսից լրագրիներին հեռագրում են օգոստոսի 24-ին: Լօրդ Դիֆէլին սեպտեմբերի 3-ին սուլթանին հաղորդեց, որ ինքն լրագրութիւն է ստանում համաձայնել, որ թիւրքաց զօրքից 2000-ից մինչև 3000 մարդիկ Պարտ-Սաիդում ափ իջնեն, զիստօր հրամանատար թիւրքաց զօրքերի պէտք է լինի Դեր-վիշ-փաշա: Սաիդ-փաշան յայտնեց Կունդուրօտին, որ Բ. Գուրը պատրաստ է զիջանել Յունաստանին բոլոր վիճելի կէտերը, ի բաց առնելով Չինո չրջանը: Ասում են, որ Աւստրիան իր անբաւականութիւնը յայտնեց Յունաստանին, խաղաղութիւնը խանգարելու փորձերի դէմ:

— Մանիլայից հաղորդում են սեպտեմբերի 3-ից, որ մինչև այժմ ժամատակտից 347 տեղացիներ են մեռել և մի եւրօպացի:

— Վիէնայից հեռագրում են օգոստոսի 25-ին: Անցեալ զիշեր տնային խռովարկութիւններ եղան 26 մարդկանց մօտ, որոնք պատկանում են բանւորների արմատական կուսակցութեանը: Խռովարկութիւնից յետոյ նրանք ոստիկանութեան հսկողութեան տակ դրվեցան:

— Լավում է, որ աւստրիական կառավարութիւնը, կրկին անգամ հետեւելով իշխան Բիսմարկի առած օրինակին, դիտաւորութիւն ունի թէյիստատին մի օրէնք առաջարկել, որով սօցիալիստները օրէնքից դուրս են յայտնվում:

— Մադագասկարեան» հարցը աստիճան առ աստիճան ընթացել է ստանում: Անգլիա հաւառ Մադագասկար կղզու թագուհու զեպանութիւնը, որ նպատակ ունի անգլիական կառավարութեան պաշտպանութիւնը խնդրել Ֆրանսիացիների պահանջների դէմ:

տեղ կառավարութեան գլուխ ենք համարում նրանց և թող ենք արել գործերի ղեկավարութիւնը նրանց ձեռքը, յոյս ենք դրել այնպիսեաց վրա, որոնք կարեկցութեան արժանի են, օգնութեան կարօտ: Նրաւ այժմ գտնվում են այն ճանապարհի վրա, որտեղից վաղուց անցել և կորել են Հայաստանից անջատված զաղթական ժողովուրդներ: Մի երիտասարդութիւն ունեն, որի ձեռքից եթէ բռնեն, հողին ականջից դուրս կը դայ: Կարդացել ես, աղիւն ընթերցող, «Մասիսի» մէջ տըպված Գրասեր Ատոմի դառնացանքներ, սղբափոք մարդկաների հետ գործ չունեն: Հիւզոն նըբանց պէս է մտածում, Լամարտինի պէս են հիւանդանում, Լիտրէի պէս քնում, բայց հայի պէս երբէք չեն աշխատում:

Մ. գիւղն էր գնացել «Մշակի» մեծ աշխատակից և իմ բարեկամի տուն: Այս պարոնի հետ միասին մնացել էինք նոյն գիւղի ուսումնարանի յարկի տակ 18 տարի առաջ: Պատմեցին որ նոյն օր Գուրգենեան մասնաւոր ուսումնարանի (պանսիօն) պարգեաւաշխութեան հանդէսն է կատարվել. կարդացել են յունարէն ձառեր, երգել են ֆրանսերէն երգեր, բայց հայերէնի համար խօսք չէ եղել: Եւ պ. Գրասեր Ատոմը Գուրգենեանին անուանել էր նոյն գիւղի Գարիբալդին: Ամիջապէս բարեկամայն խնդրեցի գերեզմանոց գնալ, որ աշակերտ ժամանակին խաղացել էինք: Բարեկամս ինձ նախազուգարեց որ դա սատիկ կը տխրացնէր մնալ: Արդարեւ Մ. գիւղի մարմարինեայ տապանաքարերով զարդարված գեղեցիկ գերեզմանատունը, թիւրք զինուորները ընդհանուր ապականութիւն, արտաքնոցի տեղ էին չինել: Ինչպէս, բարեկամ, հարցնում եմ ընկերիս, դուք Գարիբալդի ունիք և թիւրքերը անպատիժ համարձակվում են անպատեւել, աղտողել ձեր հարց, նախնեաց հանգստատեղին...: Անձնատրութիւնը այն աստիճանի պակասած է, որ եթէ թիւրքեր այդ արտեղութիւն կենդանիների գլխին կատաբէին, կենդանիներն էլ մեռնելու պէս պիտի լուէին:

Սովետոյ յանձնաժողովին գնացի: Ցանկանում էի տեղեկանալ թէ ինչ եղաւ Խրիմեան հայրիկի առաջարկած փոխատու ընկերութեան կանոնադրութիւնը, որի նպատակն էր զիւղացուն ա-

ՄՇԱԿԻ ՀՆՈՒԱԳԻՐՆԵՐ

ՀԻՒՍԻՍԱՑԻՆ ԳՈՐԾԱԿԱՆՈՒԹԵՆԻՑ

ՄՐՍԿՎԱ, 29 օգոստոսի: Մեծ իշխանուհի Եկատերինա Միխայլովնա այսօր երեկոյան ուղևորվում է Ս. Պետերբուրգ: Պալատական մինիստրը այսօր վերադառնալու աշխատանքները կրեմլի պալատի և Մեծ թատրոնի մէջ: Այսօր առաւօտեան 9 ժամին միտրոպոլիտ Իոննիկի զգեստաւորվեցաւ Կազանեան մայր-եկեղեցու մէջ և հանդիսով ուղևորվեցաւ Ուսպենսկի մայր-եկեղեցին, որտեղ առաջին պատարագը մատուցեց:

ՊԻՄՏԻԳՐՈՒԿ, 29 օգոստոսի: Ներկայ սեզոնին այցելուները թիւը 4,001 էր, անցեալ տարւանց 561 աւելի:

ՕՐԵՆԲՈՒՐԿ, 29 օգոստոսի: Առանձին մասնաժողովը Սակմորի կամուրջը քննելուց յետոյ կարելի համարեց ուղղել փշացած հիմքը և երկու շաբաթից յետոյ սկսել շարժումը առանց ճանապարհորդներին տեղափոխելու:

ՈՒՖԱ, 29 օգոստոսի: Տեղական բաժնի թիւը փոքրացելով է մինչև 500:

ՍԻԲԵՐԻԱ, 29 օգոստոսի: Վոլգայի մօտ այրվում էր Կրասնի-Եսր գիւղը: Բոցը զեռադարեցրած է: Այրված են մօտ 100 տներ:

ԼՕՆԻՆ, 29 օգոստոսի: Պատրիարքը ըսկալեցաւ Կասսատինի մօտ Հետեւեկներ կրակից յետոյ անգլիացիները կրակ բաց արին գաշտային և 40 ֆունտանոց թնդանոթներէր: Հեծելազօրքը պատրաստվում է յարձակման համար: Անգլիական և եգիպտական հետեւեկները յարձակվում են միմեանց վրա:

ԱԼԷՔՍԱՆԴՐՈՒՄ, 29 օգոստոսի: Մասնա-

ժողով է նշանակված ռաբակոնովսկից փնտրածներին վարձատրելու համար: ԼՕՆԻՆ, 29 օգոստոսի: Եգիպտացիները յետ քաշվեցան մի քանի հարիւր մարդ, 4 թնդանոթ և մի քանի գերիներ կորցնելուց յետոյ: Անգլիացիները կորուստները նշանաւոր են:

Կ. ՊՈԼԻՍ, 29 օգոստոսի: Բ. Գուռը պահանջում է, որ ցուցաստանը դադարեցնի զինաւորվելը:

ՉԵՆՍՏՈՒՅԿ, 29 օգոստոսի: Պաշտօնապէս հաշուում են 200,000 աւելի ուկրաիններ, որոնք եկել են սուրբ պատկերի յօբելեանին: Հանդէսը մի շաբաթ կը տևի:

ՆԻՃՆԻՆՆՈՎԳՐՈՒԿ, 29 օգոստոսի: Նիժնայի և Կազանի մէջ երկու շաբաթներ յատակը գնացին. „Кавказъ и Меркурий“ ընկերութեան „Спаскій замокъ“ նաւը և Վոլգայի շաբաթաւոր ընկերութեան „Паревна“ նաւը:

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԿ, 29 օգոստոսի: „Правит. Вѣстн. Կրակիցը հաղորդում է, երեկ Պետերբուրգի մէջ չերնօգորիական իշխանը այցելեց թագաւորին և ներկայացաւ թագաւորին: Թագաւորը չերնօգորիական ժապաւենով ընդունեց իշխանին նաւահանգստի վրա: „Новое Время“ Կրակիցը հաղորդում է, որ Կովկասի վարչական վերանորոգութեան նախագիծը յետաձգված է: Տեղական վարչութիւնը մինչև անգամ անհրաժեշտ է համարում իր իշխանութեան ընդարձակումը: Կովկասեան բարձր ծառայողները շատերը պէտք է փոփոխվեն: Պետերբուրգի ինտենդանտական բաժինը դատաստանի նմանակող ստատսկի-սովետներ Պոպովին և Կոլեմսկի-սկիւրտար Ժուկին զանազան զեղծումների համար: Դատաստանական այդ դորժը հոկտեմբերին կըս-

կալի: „Новости“ Կրակիցը լսել է, որ Կայսերական զինուորական գրասենակի կառավարիչ Ռիտտեր աւելի մեծ պաշտօն է ստանում:

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԿ, 31 օգոստոսի: Երեկ Ա. Եքսանդրեան օրը Ս. Պետերբուրգը հանդիսով ընդունեց թագաւորին թագուհուն և թագաժառանգին: Վաղ առաւօտեանից մայրաքաղաքը զարդարվեցաւ դրօշակներով: Թագաւորական ընտանիքը, շաբաթաւոր հասնելով Պետերբուրգից, նաւահանգստից բաց կառքերով ուղևորվեցաւ Ալեքսանդր - Նիվսկայա մայր-եկեղեցին, իսկ մարթնիքի վերջնաւորաց յետոյ այցելեցին ժողովրդական զբօսանքի տեղը Գորիցին Լուգ: Ամբողջ ճանապարհին հասարակութիւնը ուրախութեամբ ողջունում էր թագաւորին, թագուհուն և թագաժառանգին: Գիշերը քաղաքը լուսաւորված էր: Գեղեցիկ եղանակը նպաստեց հանգէսին: Այսօր երեկոյեան 7 ժամին զենքաւ ջերնիակ 12 ծառայողները ուղեկցութեամբ ուղևորվում է: Մօսկվայի մէջ երեք օր կը մնայ, իսկ այնտեղից կուղևորվի ՆիՃնին: Նովոօրոգ, յետոյ շաբաթաւոր Սամարա, այնուհետև Օրէնբուրգ և այնտեղից Կազինսկ: Սլավոնական բարեգործական ընկերութիւնը հանդիսով ճանապարհ կը գնի գեներալին, իբրեւ իր պատուաւոր անդամին:

ՏԵՏԻՆԻ, 31 օգոստոսի: Օգնութիւնը դադարեցրած է Բօսնիայի և Հերցեգովինայի այն զաղթականներին միայն, որոնց հայրենիք վերադառնալուց յետոյ պատիժ է ըստաւում: Մնացածներին շարունակվում է:

ԼՕՆԻՆ, 31 օգոստոսի: Պաշտօնապէս յայտնված է, Շաբաթվա կուի ժամանակ անգլիացիները կորցրին սպանվածներով 2 և վերաւորվածներով 61 հոգի: Անգլիացիները

21 գերի են վերցրել: Եգիպտացիների ոչ-ժերը բաղկացած էին 20 հետեւակ, 2 հեծեալ և բեզուկների 2 զուգերից:

ՄՐՍԿՎԱ, 31 օգոստոսի: Մօսկվայի մէջ օգոստոսի 29-ին աշխարհահեղեղի մէջ ցոյց տրվեցաւ խմելիկովի շինած խուճրը, որ չերնօգորիական իշխանը թագաւորութեան օրը պէտք է ընծայէ թագաւորին: Մօսկվան հանդիսով տօնում է թագաւորի անուանակոչութեան օրը: 101 անգամ թնդանոթներ են արձակված: Քաղաքը զարդարված է դրօշակներով, երեկոյեան լուսաւորութիւն էր և երաժշտութիւն էր ածում:

ՐՕՍՏՈՎ (Գօնի վրա), 31 օգոստոսի: Մեր կողմերում անասունների հիւանդութիւնը դադարեցաւ:

ՎԱՐՇԱՎԱ, 31 օգոստոսի: Այրվեցաւ Սարոփինսկու մահուկի գործարանը: Վնասները հասնում են 150,000 ռուբլին, առանց գործի մնացին 500 բանւորներ:

ԵԿԱՏԵՐԻՆԲՈՒՐԿ, 31 օգոստոսի: Կրեստօվեան տօնավաճառը դանդաղ անցաւ դրամական պակասութեան և առաջվայ ապրանքների շատութեան պատճառով: Սիրիբայի մէջ բանկերը ստացան հատուցումներ: Մօսկվայի ֆիրմաները ժամանակ տուին, միւսները, մանաւանդ Կուլչայի, ընդհատեցին հատուցումները 500,000 ռ. գումարից աւելի:

ՄԻՋԱԶԳԱՑԻՆ ԳՈՐԾԱԿԱՆՈՒԹԵՆԻՑ

ԿԱՍԱՍԻՆ, 28 օգոստոսի: Այսօր առաւօտ Արաբի-փաշա յարձակվեցաւ անգլիացիների վրա: 7-ից մինչև 12 ժամը երեք մղոն տարածութեան վրա տաք կռիւ էր: Անգլիացիները 100 մարդ կորցրին: Արաբի-փաշա յետ է մղված:

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԿ, 31 օգոստոսի: Հետեւեկ աստիճանները ստացան, գեներալ-ադմիրալ-

զատել վախճաւորների տնայնոց հարստահարութիւններից: Նիարապրեցի նորանց հայ գիւղացու ստրկական վիճակը, իրենց երկրագործութեան սարսափելի անկումը, մարդաբնակութեան սպառնալից տուի նրանց Պոլսոյ մշակների քառասուն հազար թիւը, որոնց պատճառով ազգը տարին քառասուն հազար ծնունդի կորուստ է ունենում միայն Պոլսոյ մէջ, իրենցիկ որ այժմ կանայք են սկսել զաղթել և Կ. Պոլսում 1,000-ից աւելի Հայաստանից պանդխտած կանայք կան: Ոչ մէկը օգուտ չարեց: Յանձնաժողովի անդամները յայտնեցին, որ ապահովութիւն չունեն այդպիսի ձեռնարկութիւնների համար: Ուրեմն մի աշխարհի մէջ երբ ապահովութիւն չը կայ, ինչպէս են այդ պարսիկները շարունակում իրենցիկ առեւտուր... լաւ է վարվել սովելոց մասնաժողովը: Նա ինքզինք զգել է հազար և մի կասկածների տակ: Սովել անցաւ, ճշմարիտ է, բայց նորա աւերանաց հեղեղը դեռ մնում են: Գիւղացիները Հայաստանում զրկվել են իրենցիկ հողից, թաղ-գիւղ են մինչև չլինք պարսիկների մէջ, նորանց միջոց պէտք է տալ աղանդաւորութեան տուկոյից: Երկրի ձեռք բերելով իրենցիկ հողի սեփականութեան իրաւունքը, այդ միայն փոխառու ընկերութիւնների միջոցաւ կարելի կը լինի: Պէտք է մտածանայ մասնաժողովը, որ նա պարտական է հային Հայաստանի մէջ օգնելու... այդ նպատակից դուրս իրաւունք չունի, թէև շատերը բամբասում են, որ այդ դրամաւորութիւնը առձեռն պահվում է հայոց ապագայ կաթողիկոսի ծախսերը ծածկելու համար... մենք դորան չենք հաւատում և յոյս ունենք որ մասնաժողովը կը մտնի իւր նպատակի ճանապարհի մէջ:

Գանդատ յայտնեցին Վշակի խմբագիր զէմ, որ իրանց նամակին չէ պատասխանել: ինչ պատասխան էիք սպասում, հարցուցին:

— Նշալի, թէ ուսանայիցիք որքան օգնութիւն է ժողովը:

Չարմանալի քաղաքավարութիւն. դոյա կարծիքով խմբագիրը պարտական է իւր 3—4 տարվայ թերթերը թերթել և յանձնաժողովի համար ուտելու փաւ պատրաստել: Բանից երևաց որ այս պարսիկներից և ոչ մէկը ուսանայոց թերթե-րի երեսը չէ տեսել...

Մնում է մի քանի խօսք էլ Կ. Պոլսոյ ուսումնարանների վրա առել և նամակ վերջացնել:

Ազգային ուսումնարանները մի ժողովրդի բարոյական դրութեան ապացոյցներն են: Կոչանով հասկացվում է, թէ մի հասարակութիւն որքան ընդունակ, արամաւորված է դարձանալու, յառաջագիւնելու, ազգային կամ հասարակական որոշ նպատակի ընթացքում որքան հաստատուն են նորա հիմունքը:

Ազգային ուսումնարանները ազգային ազգազան են արտադրում. միատեսակ հոգով և համոզմունքով պատրաստված հասարակութեան անդամներ, որոնք որոց որդի աստիճանաբար բարձրանում են դէպի կենցաղավարութեան ամենալաւ և ամենակատարեալ ճանապարհը:

Ազգային հասարակութիւնների ներկան անցեալին, ազգազան ներկային չէ նմանվում:

Տարբերութիւնը միշտ փոքրից դէպի մեծ, անկատարից դէպի կատարեալ, գաղափարականից դէպի էականն է լինում:

Խօսքս Պոլսոյ ուսումնարանների վրա է, որոց անմիջիկապ կենքի վրա ուշադրութիւն եմ հրահրում:

1861 թականից մինչև 1864 թ. Կ. Պոլսում ապրելով, ես տեղեակ եմ այն ժամանակվայ ուսումնարանների վիճակին: 21 տարուց զինի կըրկին անգամ Պոլիս վերադառնալով, գտնում եմ մի շատ տխուր համեմատութիւն:

Տարբերութիւնը յետադիմութեան մէջն է: Այժմեան ուսումնարանները դեռ 1861 թ. ուսումնարաններից աւելի ստոր ընկած են, ուսումնարանական անցեալը ներկայի համար ոչինչ չէ պատրաստել, որով ժողովրդի բարոյական դրութիւնը խոնարհել է դէպի քաղաքակրթութեան հորիզոնի մոտեցը:

Այդ ուսումնարանները ոչ մի ուսումնարանի նման չեն, ոչ անդրասայի, ոչ կերպականի, ոչ տարրականի և ոչ միջնակարգի: Կատարականական ուղղութիւնը դեռ ընդունված չէ: Աշակերտները մի ընդհանուր դահլիճի մէջ պիտի սպասեն, որ մի առարկայի կամ լեզուի ուսուցիչ գնաց և միւսը նորան փոխարինէ, այդպիսով առաւօտից մինչև երեկոյ ժամավաճառ լինելով, մի աշակերտ հազիւ կարողանում է 2 դաս առնել:

Աններելի է արդարեւ Եւրօպայի թիւ տակին նստել, և կարգաւորեալ ուսումնարաններ չունենալ:

Բայց Կ. Պոլսում 1830 թ.ին սկսած երկը են ջանքեր, զանազան ժամանակներում բացվել են ուսումնարաններ, բայց այդ ամենը հաստատուն չիւր, չունենալուն համար փակվել են, թող անկող տխուր յիշատակի համար մի կարգ անուններ, ինչպէս Խակիւտարի ձեռնարանը, որը առանց զբաղաւորի մի քանի տարի կենք ունենալից զինի փակվել է. Փրկչի ուսումնարանը, որ նոյնպէս բացվել է նոյնպէս փակվել է: Այս փորձերից զինի հիմնվից Կուրա—Շահնազարեան ուսումնարանը, բայց զբաղաւորաւ դուրս չիւրը աւաղի վրա զրկված լինելով, նա էլ տեղականների կարգի անցաւ:

Սակայն Կ. Պոլսոյ հասարակութեան վրա, որ զաւանդների համար միշտ առաջնորդող դեր է խաղացել, բարձրվում է մի ծանր պատասխանատուութիւն:

Գնացի Գալաթիոյ Կ ե ն տ ր օ ն ա կ ա ն ուսումնարանը, թող չը սկսվի ընթերցողը, այդ երկխան մկտեղիս անունը կենտրոնական են գրել, միջում տարբերքներ էլ չը կան: Այդ տեղ կիրակի օրեր ժողովում են Հայաստանից եկած բնակիչները և սովորում են: Ըստ գովելի է պ. պ. ուսուցիչներ և եռանդը, որոնք իւրենց պառն ժամերը նուիրում են իւրենց գիւղացի եղբայրների կրթութեան, բայց խիստ ցաւալի է որ այդ աշխատութիւնը ոչ մի նպատակի չեն հասցնում: Իմ ներս մտած ժամանակ ուսուցիչը արդէն պարսպում է հայերէն լեզուով դրաւաւ քերականութեամբ, թարգմանում էին Նիլիէն նրանք, որոնք կարգաւ չը գիտէին:

Եւ հարց հաւուց մերոց պ. ուսուցիչը թարգմանեց չե մեր հաւերու հայերէն: Սատիկի դուար էր լսել երբ զաւառացի աշակերտ ուղիղ արտասանում էր, բարի, դաղմիք, չուր, անձրեւ, վարժապետը նորան կանգնեցնում և ստիպում էր արտասանել փարի, քաղտնիք, չուր, անցրեւ և այլն, այնուհետև գոյական անունից և ներգործական բայից սկսեցին վերլուծել: Ժամ և կէս տեւեց հայերէնի դասը և ուսուցիչը, առանց դասամիջոց տալու, սկսեց կրօնագիտութեան, մի ժամ

ճառեց նա երրորդութեան խորհրդի վրա, եզրակացնելով, որ դա մի այնպիսի գերբնական խորհուրդ է, որի վրա մարդկային մտքով և լեզուով անկարելի է ճառել և մի դադափաղ կազմել, միայն թէ հարկաւոր է հաւատալ: Այդ ճառարանութիւնը քուն բերեց մի քանի աշակերտների վրա: Հիմարիտ որ, ես էլ այդ թմրութեանց ազատ չը մնացի:

Հետաքրքիր է հարցնել. ինչ պէտք ունեն բնականիւրները դրաւաւ քերականութեան և Նիլիէի թարգմանութեան: Կոչական անուն, եզակի ուղղական, ներգործական բայը կամ հաւերու հայերէն թարգմանութիւնը որքան կարող են օգնել նրանց գիւղատնտեսական գործերին: Կամ աստուածաբանական խնդիրների գիտնալը, երրորդութեան խորհրդի վրա ճառելը, որքան կարող է հարստահարիչների ձեռքից ազատել նորանց... Իմ կարծիքով, աւելի արդիւնաւոր կը լինի աշխարհաբաւ գրել կարգաւ, թարգմանութեան 4 դործողութիւն սովորացնել, աւելի պարագիւղի զաւանդական զանգուր, պատմել նորանց եւրօպական օրինակելի եղբայրական հասարակութեան կենքը, պարագմանց եղանակը: Գիւղացի աշակերտին պատմել տալ իւրենց անտեսական պայմանները, պարագմանց ձեռքը և համեմատել եւրօպականի հետ: Գննել զրկողութեանց աղբիւրները, թէ ինչից ստիպված գիւղացին թողնում է իւր պարագմունքը և ընկնում է անասնական ծառայութեան մէջ: Խօսել նորա հետ հողի, նորա արեւի սեփականութեան իրաւունքի, գիւղական անձնասիրութեան, անձնապաշտպանութեան, ինքնաօգնութեան վրա, — այդպիսով կարելի է քիչ ժամանակներում բնականիւրներից կազմել մի ընկերական հասարակութիւն հարստահարութեանց դէմ մրցող և յաղթող: Իսկ դրաւաւ քերականութեանով կարելի է պատրաստել շատ շատ դրաւաւագէտ բնականիւրներ:

Այստեղի օղի աղբեղութիւնը արդէն սկսել է ներգործել. էգուց թողնում եմ և հետանում նորանից:

Ա. Թօխմախեան

